«Ի ԷԼ ԷԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
իրավաբանական գրասենյակ

«Ի ԷԼ ԷԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԵԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2025
ԵՐԵՎԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն ընդհանուր դրույթներով և պայմաններով կարգավորում են **«Ի ԷԼ ԷԼ Գործընկերություն» փակ բաժնետիրական ընկերության** (գրանցման համարը՝ 26.120.1010683, ՀՎՀՀ՝ 06945171, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0002, Արամի փ., 80, 2-րդ հարկ) (այսուհետ՝ **Գրասենյակ**) կողմից մատուցվող իրավաբանական ծառայություններից օգտվելու կարգը և տարածվում բոլոր այն վստահորդների վրա, ովքեր դիմում են Գրասենյակին իրավաբանական ներկայացուցչության կամ խորհրդատվության համար: Վստահորդը, ստորագրելով Գրասենյակի և իր միջև կնքվող Պայմանագիրը, հավաստում է, որ ընդունում է սույն ընդհանուր դրույթները և պայմանները, ինչպես նաև Գրասենյակի կողմից հրապարակված ընթացակարգերը և կանոնակարգերը:

2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ընդհանուր դրույթներում, պայմաններում և պայմանագրում մեծատառով օգտագործվող եզրույթներն ունեն ստորև նշված իմաստները.

«Պայմաններ»՝ Գրասենյակի կողմից ծառայությունների մատուցման սույն ընդհանուր դրույթները և պայմանները, ինչպես նաև Գրասենյակի կողմից կայքում հրապարակված այլ կանոնները, ընթացակարգերը,

«Վստահորդ»՝ Գրասենյակի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող անձ, ով կամ ում օգտին Գրասենյակի հետ կնքվել է Պայմանագիր,

«Պատվիրատու»՝ անձ, ով Գրասենյակի հետ կնքել է Պայմանագիր հօգուտ Վստահորդի. Պայմաններում Վստահորդի համար սահմանված բոլոր կարգավորումները հավասարապես տարածվում են նաև Պատվիրատուի նկատմամբ.

«Կողմեր»՝ Գրասենյակը և Վստահորդը միասին,

«Պայմանագիր» իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը, որը կնքվում է Գրասենյակի և Վստահորդի միջև մեկ միասնական փաստաթղթի ստորագրման, էլեկտրոնային եղանակով ստորագրված տարբերակների կամ Պայմանագրի թղթային տեքստի ստորագրված օրինակի սքանավորված տարբերակների էլեկտրոնային փոխանակման եղանակով կամ կողմերի համար փոխադարձ ընդունելի այլ եղանոկով,

«**Համաձայնություն**» նշանակում է Գրասենյակի և Վստահորդի միջև բոլոր համաձայնագրերը, պայմանագրերը կամ այլ՝ պարտադիր կատարման ենթակա պարտավորությունները, պայմանավորվածությունները կամ ծրագրերը, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր (ներառյալ դրանց ցանկացած լրացումներն ու փոփոխությունները), որոնց կողմ է հանդիսանում այդ կողմը կամ որոնց հետ վերջինս այլ կերպ կապված է,

«Ծառայություններ»՝ Պայմանագրում կամ դրա անբաժանելի մասը կազմող հավելվածներում կամ կողմերի համար ընդունելի այլ եղանակով նկարագրված և Գրասենյակի կողմից Վստահորդին տրամադրվող իրավաբանական ծառայությունները,

«Վճար»՝ Պայմանագրում կամ դրա անբաժանելի մասը կազմող հավելվածներում սահմանված կամ Կողմերի համար ընդունելի այլ եղանակով համաձայնեցված գումարի չափ, որը Ծառայությունների դիմաց Պատվիրատուն կամ Վստահորդը վճարում են Գրասենյակին.

«Փոխկապակցված անձինք» նշանակում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով՝ փոխկապակցված իրավաբանական անձինք, փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձինք, փոխկապակցված ֆիզիկական անձինք.

«Պահանջ» նշանակում է ցանկացած գործողություն, պահանջ, հայց, հայցապահանջ, մեղադրանք, բողոք, հարցում, լսում, հետաքննություն, խախտման կամ կետանցման մասին ծանուցում, դատական, արբիտրաժային կամ այլ վարույթ, բողոքարկում կամ այլ վեճ, քաղաքացիական, քրեական, վարչական կամ այլ բնույթի.

«Փաստաբանական գաղտնիք» են համարվում այն տեղեկությունները և ապացույցները, որոնք իրավաբանական օգնություն հայցող անձը (վստահորդը) փոխանցել է Գրասենյակի փաստաբանին, փաստաբանի տված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները (նյութերը, կրիչները), որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն:

«Դատարան» նշանակում է Հայաստանի Հանրապետության բոլոր դատարանները և դատական բոլոր ատյանները, այդ թվում առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանները, Վարչական դատարանը, Սնանկության դատարանը, Հակակոռուպցիոն դատարանը, Վերաքննիչ դատարանները, այդ թվում վերաքննիչ քաղաքացիական, վերաքննիչ վարչական և վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանները, Վճռաբեկ դատարանի բոլոր պալատները, Սահմանադրական դատարանը, արբիտրաժային տրիբունալները,

«Պետական մարմին» նշանակում է ցանկացած պետության, դաշնության, նահանգի, երկրի կամ դրանց որևէ քաղաքական ստորաբաժանման որևէ կառավարություն, ցանկացած սուբյեկտ, իշխանություն կամ մարմին, որն իրականացնում է կառավարության կամ դրան առնչվող՝ գործադիր, օրենսդիր, դատական, կարգավորող կամ վարչական գործառույթներ, ներառյալ Հայաստանի Հանրապետության կամ որևէ այլ երկրի կամ դրանց որևէ քաղաքական ստորաբաժանման ցանկացած կառավարչական մարմին, գործակալություն, ստորաբաժանում, խորհուրդ, հանձնաժողով կամ վարչական մարմին, արբիտր, ինչպես նաև ցանկացած ինքնակարգավորվող կազմակերպություն.

«Պարտադիր կատարման ենթակա որոշումներ» նշանակում է Պետական մարմնի կողմից կամ վերջինիս հսկողության ներքո արձակած ցանկացած հրաման, վճիռ, որոշում, դատավճիռ, հրամանագիր, գրություն, ծանուցագիր, մանդատ, կարգադրություն, հրահանգ, համաձայնություն, հաստատում, արգելանք կամ նմանատիպ այլ որոշում կամ եզրակացություն:

«Օրենք» կամ «օրենսդրություն» նշանակում է ցանկացած կիրառելի Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի, կանոնակարգի, կանոնադրության, օրենսգրքի, կանոնի, ցանկացած կառավարական հաստատման, զիջման, կարգադրության, արտոնագրի, լիցենզիայի, համաձայնագրի, հրահանգի, պահանջի կամ կառավարական այլ սահմանափակման կամ որոշման, կամ որոշման ցանկացած համանման ձևի բոլոր և ցանկացած դրույթները, ինչպես նաև վերը նշվածներից որևէ մեկի

մեկնաբանությունը կամ կիրառումը ցանկացած Պետական մարմնի կողմից, յուրաքանչյուր դեպքում՝ փոփոխված տարբերակով, և ցանկացած ու բոլոր կիրառելի Կառավարական կարգադրությունները:

«Պատասխանատվություն» նշանակում է ցանկացած ուղղակի կամ անուղղակի պատասխանատվություն, պարտք, պահանջ, կորուստ, վնաս, թերություն, պարտավորություն կամ պարտականություն՝ որոշված կամ որոշելի, մարված կամ չմարված, ապահովված կամ չապահովված, հաշվեգրված, բացարձակ կամ պայմանական:

«Կայք»՝ Գրասենյակի ինտերնետային կայքը՝ https://ell.am/ :

3. ՎՃԱՐՆԵՐԸ, ԱՅԼ ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Գրասենյակի կողմից մատուցվող Ծառայությունների վճարները սահմանվում են Պայմանագրով և/կամ դրա անբաժանելի մասը կազմող հավելվածներով կամ դրանցով սահմանված կարգով:

3.2. Եթե այլ բան սահմանված չէ Պայմանագրով կամ հավելվածներով, ապա Վճարը ներառում է բոլոր հարկերը, սակայն չի ներառում ծառայությունների մատուցման ընթացքում առաջացած հնարավոր ծախսերը՝ այդ թվում պետական տուրքերը, փաստաթղթերի թարգմանությունների և նոտարական գործողությունների համար վճարները և այլն:

3.3. Բոլոր վճարումները կատարվում են Գրասենյակի բանկային հաշվին՝ փոխանցում կատարելու միջոցով:

3.4. Վճարումները կատարելու հետ կապված հաշիվ կամ հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ այլ փաստաթղթի կազմումը կամ կնքումը չեն կարող ազդեցություն ունենալ Վստահորդի վճարման պարտականության կատարման կամ չկատարման վրա:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

4.1. Գրասենյակը իրեն տրված լիազորությունների շրջանակում մատուցում է իրավաբանական և փաստաբանական ծառայություններ, տրամադրում է գրավոր և/կամ բանավոր խորհրդատվություններ այդ պահին գործող ՀՀ օրենսդրությանը, իրեն տրամադրված լիցենզիաներին և թույլտվություններին, Պայմանագրին, սույն Պայմաններին, Գրասենյակի ներքին ընթացակարգերին և քաղաքականություններին համապատասխան, եթե Վստահորդի կամ Պատվիրատուի հանձնարարությամբ այլ բան սահմանված չէ:

4.2. Գրասենյակը իրեն տրված լիազորությունների շրջանակում մատուցում է իրավաբանական և փաստաբանական ծառայություններ, տրամադրում գրավոր և/կամ բանավոր խորհրդատվություններ՝ հիմք ընդունելով Վստահորդի և/կամ Պատվիրատուի կողմից տրամադրած տեղեկությունները, փաստաթղթերը և չի կրում որևէ պարտավորություն ստուգել դրանց հավաստիությունը: Տեղեկությունների, փաստաթղթերի ոչ հավաստի կամ կեղծ լինելու հետևանքով առաջացած բոլոր բացասական հետևանքները կրում է Վստահորդը և/կամ Պատվիրատուն:

4.3. Գրասենյակի կողմից Ծառայությունները մատուցվում են պատշաճ կարգով, որակյալ մասնագետների օգնությամբ, և անհրաժեշտության դեպքում իր կողմից ներգրավված երրորդ անձանց հետ համատեղ, սակայն չի երաշխավորում գործի ելքը և չի կրում պատասխանատվություն ծառայությունների մատուցման արդյունքի, ՀՀ պետական մարմինների կամ Դատարանների կողմից կայացված որոշումների համար:

4.4. Գրասենյակը իրավունք ունի հանդես գալ Վստահորդի անունից երրորդ անձանց հետ հարաբերություններում, պահանջել վճարել մատուցվող ծառայությունների դիմաց Պայմանագրով սահմանված չափով և կարգով, պահանջել չխոչընդոտել ծառայությունների մատուցմանը, թերությունների առկայության դեպքում պատշաճ կարգով վերացնել դրանք, հրաժարվել ծառայությունների մատուցումից, եթե պատշաճ ձևով հիմնավորի, որ նման ծառայությունների մատուցումը հակասում է ՀՀ օրենսդրությանը, կասեցնել ծառայությունների մատուցումը մինչև Վստահորդի կողմից վճարման պարտավորության կատարումը:

4.5. Ծառայությունների մատուցման ընթացքում Վստահորդն իրավունք ունի Գրասենյակից պահանջել Պայմանագրում սահմանված ծառայությունների որակյալ և ամբողջական մատուցում, պահանջել վերացնել ծառայությունների մատուցման ընթացքում առաջացած թերությունները, ցանկացած ժամանակ ստուգել Գրասենյակի կողմից մատուցվող ծառայությունների որակը և ընթացքը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, Ծառայությունների կատարման ընթացքում Գրասենյակի կողմից թերությունները չվերացնելու դեպքում դադարեցնել Պայմանագիրը՝ նախապես Գրասենյակին վճարելով կատարված աշխատանքների դիմաց:

4.6. Վստահորդը պարտավորվում է վճարել Գրասենյակին մատուցվող ծառայությունների դիմաց Պայմանագրով սահմանված չափով և կարգով, չխոչընդոտել Գրասենյակի կողմից ծառայությունների մատուցմանը, առաջնորդվել և հիմք ընդունել սույն ընդհանուր դրույթները և պայմանները, Գրասենյակի կողմից հրապարակված այլ ընթացակարգերը, անհրաժեշտության դեպքում և Գրասենյակի պահանջով տրամադրել գրավոր կամ բանավոր տեղեկություն, փաստաթղթեր, առանց որոնց անհնար կլինի Գրասենյակի կողմից ծառայությունների պատշաճ մատուցումը, անմիջապես տեղեկացնել Գրասենյակին նրան տրամադրված գրավոր կամ բանավոր տեղեկության, փաստաթղթերի հետ կապված փոփոխությունների վերաբերյալ, առանց որոնց անհնար կլինի Գրասենյակի կողմից ծառայությունների պատշաճ մատուցումը:

4.7. Կողմերը սույն Պայմաններով, Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

4.8. Ծառայությունները կարող են դադարեցվել՝ ծառայությունների կատարմամբ և դրանց համար պատշաճ վճարմամբ, կողմերի համաձայնությամբ, Պայմանագրով սահմանված այլ դեպքերում, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

5. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

5.1. Գրասենյակը և Վստահորդը պարտավորվում են պահպանել, առանց սահմանափակման, բոլոր տեղեկությունների, տվյալների, փաստաթղթերի և գործարքների վերաբերյալ գաղտնիությունը, եթե օրենքի, Պայմանների, Պայմանագրի, Ընկերության կամ Վստահորդի ցուցումների համաձայն դրանք համարվում են գաղտնի կամ վերաբերում են փաստաբանական, առևտրային կամ այլ գաղտնիքին:

5.2. Կողմերից յուրաքանչյուրը սույնով երաշխավորում է, որ իր կողմից Պայմանների կատարման համար ներգրավված բոլոր երրորդ անձինք և այլ գործակալները, որոնց պետք է տրամադրվի գաղտնի տեղեկատվությունը, եթե այդպիսիք կլինեն, կկրեն Պայմաններով սահմանված գաղտնիության պարտավորությանը հավասարազոր պարտավորություն, իսկ նշված տեղեկատվությունը

բացահայտած Կողմը պատասխանատու կլինի այդ պարտավորությունների խախտման համար նույն ծավալով, որքան եթե խախտումը թույլ տրվեր իր կողմից:

5.3. Գաղտնիության պահանջը չի վերաբերում այնպիսի տեղեկատվությանը, որի չհրապարակումը հակասում է ՀՀ օրենսդրությանը կամ որը, մինչ կողմին հայտնի դառնալը, արդեն հայտնի է եղել երրորդ անձանց:

5.4. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի տրամադրել Գաղտնի տեղեկատվությունն այն դեպքերում, երբ դա պահանջվում է կիրառելի օրենսդրությամբ, դատական ակտով կամ իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված՝ պարտադիր կատարման ենթակա այլ ակտով, որոնք չեն կարող ողջամտորեն օրենքով բողոքարկվել:

5.5. Եթե Կողմերի որևէ մեկի կողմից Պայմանների և/կամ Պայմանագրի պայմանների խախտումը հանգեցրել է նրան, որ մյուս Կողմից նրա ստացած գաղտնի տեղեկությունը հայտնի է դարձել երրորդ անձանց, ապա այդ Կողմը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

6.1. Գրասենյակը մինչև Պայմանագրի կնքումը իրականացնում է ուսումնասիրություն՝ շահերի բախման հնարավոր առկայության կամ բացակայության վերաբերյալ:

6.2. Եթե Շահերի բախումը ի հայտ է գալիս ծառայությունների մատուցման ընթացքում, ապա ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների շրջանակում քննարկվում է Կողմերի հետագա համագործակցության հնարավորությունները:

7. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

7.1. Ընդհանուր դրույթները, պայմանները և Պայմանագիրը պետք է ուղղորդվի, մեկնաբանվի և կիրառվի Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

7.2. Կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

8.1. Գրասենյակը իրավունք ունի ցանկացած ժամանակ սույն Պայմաններում կատարելու փոփոխություններ և լրացումներ, որոնք ուժի մեջ են մտնում նոր խմբագրությամբ Պայմանների՝ Կայքում հրապարակումից 3 (երեք) օր հետո: Պայմաններում կատարված փոփոխություններին և լրացումներին կարելի է ծանոթանալ նաև զանգահարելով կամ այցելելով Գրասենյակ:

8.2. Պայմաններում կատարվող փոփոխությունները և/կամ լրացումները տարածվում են դրանց ուժի մեջ մտնելուց առաջ կնքված Պայմանագրերի վրա, այն պայմանով, որ Գրասենյակը որևէ միջոցով ծանուցել է Վստահորդին այդ մասին:

9. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

9.1. Ընդհանուր դրույթներով, պայմաններով և Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե նման ոչ պատշաճ կատարումը հանդիսացել է այնպիսի հանգամանքների հետևանք, որոնք այդ Կողմի ողջամիտ վերահսկողությունից դուրս են (որը գործում է Պայմաններով և Պայմանագրով նախատեսված չափանիշներին համապատասխան), ներառյալ, սակայն, չսահմանափակվելով՝ արտաքին արտակարգ իրադարձությունները, Կողմի

պարտավորությունների կատարման վրա անմիջապես ազդեցություն ունեցող կարգավորիչ փոփոխությունները, որոնք վրա են հասել անկախ այդ Կողմի կամքից (հրդեհներ, երկրաշարժներ, ջրհեղեղներ, համաճարակներ, դժբախտ պատահարներ, պայթյուններ, զանգվածային գործադուլներ կամ անկարգություններ, քաղաքացիական բնակչության հուզումներ, թշնամական ուժերի գործողություններ, պատերազմ, դիվերսիա կամ ահաբեկչություն, ինչպես նաև բոլոր մակարդակների վարչական մարմինների որոշումներ կամ դատական ատյանների ակտեր), ինչպես նաև մյուս բոլոր իրադարձությունները և/կամ հանգամանքները, որոնք Օրենքով սահմանված կարգով կճանաչվեն կիրառելի և կհայտարարվեն անհաղթահարելի ուժի հանգամանքներ:

9.2. Անհաղթահարելի ուժի հանգամանքների ազդեցության ներքո գտնվող Կողմը պարտավորվում է այդ մասին տեղեկանալուց հետո անմիջապես ծանուցել մյուս Կողմին հնարավոր կամ առկա անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքների մասին, և տեղեկացնել պարտավորությունների կատարման հետաձգման հավանական տևողության մասին, որն առաջացել է կամ ակնկալվում է, որ առաջանալու է այդ հանգամանքների հետևանքով: Պարտավորությունների կատարման ցանկացած ուշացում, որը պայմանավորված է Անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքներով՝ դրանց տևողության ողջ ընթացքում, կետանց չի համարվելու:

9.3. Այն պարագայում, եթե անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքների և (կամ) դրանց հետևանքների գործողությունը շարունակվում է ավելի քան 1 (մեկ) շաբաթ, Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել Ծառայությունների մատուցումը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով մյուս Կողմին:

10. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

10.1. Եթե այլ բան նախատեսված չէ, ցանկացած ծանուցում, համաձայնություն, հաստատում կամ այլ տեղեկատվություն, որը պահանջում կամ թույլատրում է ընդհանուր դրույթներով, պայմաններով կամ Պայմանագրով, որ Կողմերից մեկը պետք է փոխանցի մյուս Կողմին, կարող է այդ Կողմին տրվել առձեռն կամ ուղարկվել փոստով կամ ֆաքսիմիլ փոխանցմամբ կամ էլեկտրոնային փոստով՝ Պայմանագրում նշված հասցեներով կամ համարներով կամ էլեկտրոնային փոստի հասցեներով:

10.2. Կողմերն միմյանց ուղարկված ծանուցումները և (կամ) գրությունները համարում են պատշաճ ձևով ստացված (պատշաճ ձևով ծանուցված, հանձնված) այն պահից, երբ Կողմերը դրանք ուղարկել են պայմանագրում նշված Կողմերի էլեկտրոնային փոստի հասցեներին: Ընդ որում, հասցեատեր Կողմը համարվում է էլեկտրոնային փոստով պատշաճ ծանուցված՝ անկախ համապատասխան ծանուցմանը ծանոթանալու փաստից: Եթե դրանք հետ են վերադառնում ուղարկող Կողմին՝ Պայմանագրով նշված հասցեի և (կամ) էլեկտրոնային փոստի սխալ և/կամ հասցեատիրոջ բացակայության և (կամ) ուղարկող Կողմի սխալը բացառող այլ նշումներով, ապա ծանուցումները և (կամ) գրությունները համարվում են պատշաճ ձևով ստացված (ծանուցված, հանձնված)՝ այդ մասին ծանուցումը ստանալուն հաջորդող օրվանից:

10.3. Եթե ուղարկված ծանուցումը (ներառյալ՝ փաստաթղթերը, տվյալները և այլն) հասցեատեր Կողմի մեղքով չի ստացվում հասցեատիրոջ կողմից, ապա ծանուցումը (ներառյալ՝ փաստաթղթերը, տվյալները և այլն) ուղարկող Կողմը համարվում է ծանուցումը սահմանված կարգով ուղարկած, իսկ հասցեատեր Կողմը՝ պատշաճ ծանուցված:

10.4. Գրասենյակի հետ հնարավոր է կապ հաստատել կամ ծանուցել հետևյալ հասցեներով՝

10.4.1. Փոստային հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 80, 2-րդ հարկ,

10.4.2. Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@ell.am

10.4.3. Հեռախոսահամար՝ *(+374) 11 581158, (+374) 41 581158,*

11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒԹՅՆԵՐ

11.1. Սույն Ընդհանուր պայմանները և դրույթները ուժի մեջ են մտել 2025 թվականի հունվարի 01-ից:

11.2. Վստահորդը պարտավոր է անձամբ հետևել (ստուգել) սույն Պայմաններում կատարվող փոփոխություններին, որոնք հրապարակվում են Գրասենյակի www.ell.am ինտերնետային կայքում:

11.3. Սույն Պայմանները կիրառվում են մինչև սույն Պայմանների ուժի մեջ մտնելը Կողմերի միջև կնքված նախկին բոլոր Պայմանագրերի և դրանց հիման վրա մատուցվող ծառայությունների նկատմամբ: Պայմանները պարտադիր բնույթ են կրում և գործում են բացառապես ի շահ Կողմերի և իրենց համապատասխան իրավահաջորդների ու լիազորված ներկայացուցիչների:

11.4. Սույն Պայմանները կազմված են հայերեն լեզվով, սակայն կարող են թարգմանվել և զուգահեռ հրապարակվել նաև այլ լեզուներով: Հայերենի և այլ լեզվով հրապարակումների միջև հակասության դեպքում գերակա է հայերեն տարբերակը:

11.5. Պայմաններով և Պայմանագրով չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրության համաձայն:

11.6. Պայմանները հաստատված են Գրասենյակի գործադիր մարմնի կողմից՝ թիվ 29-12-24-Ն հրամանով: